ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/249

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13779-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.08.2021թ. թիվ ՍՄ//34488-2021 գրության հիման վրա, 30.08.2021թ. թիվ 26/26-1/13779-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/249 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.08.2021թ. թիվ ՍՄ//34488-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կառլեն Առաքելյան Նորիկի» ԱՁ-ի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Կառլեն Առաքելյան Նորիկի» ԱՁ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/249 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/249 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/249 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով պետության կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

3. Պայմանագրի շրջանակներում 30.01.2021թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. Գնորդի կողմից 10.08.2021թ. Վաճառողին ներկայացվել է սանիհիգիենիկ պարագաների մատակարարման հայտ:

5. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.08.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Ասատրյանս, անդամներ՝ Մ.Մինասյանս, Ս.Ղազարյանս տալիս ենք սույն

արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 10-ին սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

6. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 19.08.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Ասատրյանս, անդամներ՝ Մ.Մինասյանս, Ս.Ղազարյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության հետ ունեցած նամակագրական և բանավոր խոսակցություններից պարզ դարձավ, որ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանը չի պատրաստվում մատակարարել հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները»:

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 20.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 20-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի պայմանագրի կատարումից:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 20.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13779-2021

գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.08.2021թ. թիվ ՍՄ//34488-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով պետության կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ***հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ <u>5 աշխատանքային օրվա ընթացքում</u> մինչև 25.12.2021թ.:***

Պայմանագրի շրջանակներում 30.01.2021թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

<u>Գնորդի կողմից 10.08.2021թ. Վաճառողին ներկայացվել է սանիհիգիենիկ պարագաների մատակարարման հայտ:</u>

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.08.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Ասատրյանս, անդամներ՝ Մ.Մինասյանս, Ս.Ղազարյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 10-ին սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 19.08.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Ասատրյանս, անդամներ՝ Մ.Մինասյանս, Ս.Ղազարյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության հետ ունեցած նամակագրական և բանավոր խոսակցություններից պարզ դարձավ, որ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանը չի պատրաստվում մատակարարել հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները»:

<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 20.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 20-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանի միջև 29.01.2021թ. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-Վ-ԿԱ» ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի պայմանագրի կատարումից:</u>

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 20.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրերի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5 օրից ավելի</u>:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ տարիներով, ամիսներով կամ ***օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է*** այն օրացուցային տարվա, ամսվա, ***ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից***, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է***, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան ***հաջորդող աշխատանքային օրը***:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, որպես ապրանքի մատակարարման ժամկետ ***պատվիրատուի հայտի հիման վրա սահմանվել է 5 աշխատանքային օր,*** իսկ Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, որպիսի խախտում է համարվում համաձայն Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերությամբ ***ապրանքի մատակարարման ժամկետները 5 օրից ավելի խախտելը, մինչդեռ Պատվիրատուն 10.08.2021թ. ներկայացնելով սանիհիգիենիկ պարագաների մատակարարման հայտ, Պայմանագրի հավելված 1-ով սահմանված մատակարարման 5 աշխատանքային օրը և էական խախտումն արձանագրելու համար նախատեսված 5 օրացուցային օրը հոսած չլինելու պայմաններում, 20.08.2021թ. Տեղեկագրում հրապարակել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, որը Պայմանագրով նախատեսված ժամկետների ճիշտ հաշվարկի և պահպանման դեպքում իրավաչափ կլիներ հրապարակել ոչ շուտ քան 24.08.2021թ.:***

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 30.08.2021թ. թիվ 26/26-1/13779-2021 գրությամբ Ա/Ձ Կառլեն Նորիկի Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**